



ՄԲՐՈՑ ՂԵՒՈՂԵԱՆՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

ST. LEON ARMENIAN CHURCH

12-61 Saddle River Road

Fair Lawn, New Jersey 07410

Tel. (201) 791-2862 * Fax (201) 791-1329

Հ. Վահան Վրդ. Յովհաննէսեան, Հոգևոր Հովիւ
Very Rev. Fr. Vahan Hovhannessian, Pastor

Մայիս 2, 1994

Գերաջնորի
Տ. Խաժակ Արքեպս. Պնրսամեան
Առաջնորդ Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմին

Սիրելի Սրբազան Հայր,

Աստուած օգնական:

Ուրախութեամբ եւ խոնարհաբար ձայնս կը միացնեմ Սրբոց Ղեւոնդեանց Հայաստանեայց Եկեղեցոյ հաւատացեալ ժողովուրդին ու Ծխական Խորհուրդի անդամներուն հետ շնորհատրելու Ձերդ Սրբազնութեան վերընտրութիւնը որպէս Առաջնորդ Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմին:

Անցեալ չորս տարիներու ընթացքին մեր ժողովուրդը ապրեցաւ եւ ալանատես եղաւ Ձեր հոգեւոր անձնատուր եւ ազգասէր առաջնորդական գործունէութեան: Վստահ գիտենք որ գալիք տարիներուն ընթացքին Ձեր հովանաւորութեան տակ մեր եկեղեցին եւս առաւել պիտի աճի եւ պայծառանայ հետապնդելով իր զարթօնքի ճանապարհը:

Թոյլ տուէք որ անգամ մը եւս շնորհատրեմ ձեզ աղօթելով առ Աստուած որ պարգեւէ Ձեզ երկար եւ արդիւնաբեր տարիներ, որպէսզի դուք ալ կարողանաք առաջնորդել Ձեր խնամքին յանձնուած հաւատացեալ ժողովուրդը:

Մատչելով ի համբոյր Ձերդ Օծեալ Սուրբ Աջոյն. մնամ միշտ՝

Եղբայրական Սիրով ի Քրիստոս՝

Վահան Վրդ. Յովհաննէսեան

Նախագահ

Ս. Ղեւոնդեանց Ծխական Խորհուրդ